



Լոբբիստական գործունեության մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ

Ընդհանուր դիտողություն

Օրենքի նախագծի համաձայն լոբբիստական գործունեությունը ենթադրում է ինչպես վճարովի ծառայությունների մատուցմանն ուղղված ձեռնարկատիրական գործունեություն, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրության շրջանակներում իրականացվող շահերի պաշտպանության գործընթացի մի փուլ: Տարբեր նպատակներով իրականացվող գործունեության այս տեսակների համարժեք դիտարկումը օրենքի նախագծում առաջ է բերում դժվարություններ դրանք կարգավորելու գործում: Արդյունքում ստեղծվում են իրավիճակներ, երբ արհեստականորեն խստացվում է կանոնակարգումը հասարակական կազմակերպության համար՝ ապահովելու հավասար հնարավորություններ երկու նշված խմբերի համար, ինչը ստեղծում է լրացուցիչ խոչընդոտներ հասարակության մասնակցության համար:

Մասնավորապես, որպես խոչընդոտներ կարելի է դիտարկել այն, որ լոբբիստ համարվող ՀՀ ներկայացուցիչը պետք է

- հաշվառվի և տարեկան հաշվետվություն ներկայացնի արդեն իսկ պետական գրանցում ունեցող իր հասարակական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված գործունեության համար.
- յուրաքանչյուր պետական կառույցում լոբբիստական գործունեություն ծավալելու համար պետք է հավատարմագրվի այդ կառույցում տարեկան մեկ անգամ.
- հաշվառման համար պետք է մուծի 10000 դրամ պետական տուրք և յուրաքանչյուր կառույցում հավատարմագրվելու համար 5000-ական դրամ պետական տուրք.
- պետք է ներկայացնի տարեկան հաշվետվություն իր կողմից ծավալված գործունեության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է տվյալ օրենքի շրջանակներում լոբբիստական գործունեություն իրականացնող կազմակերպություններին ընձեռվող հնարավորություններին, ապա դրանք հիմնականում սահմանվում են՝

- 21-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն լոբբիստն իրավունք ունի մշակել, ստանալ և տարածել լոբբիստական գործունեության առարկային առնչվող իրավական ակտերի նախագծեր, դրանց առնչվող տեղեկատվական, վերլուծական և այլ փաստաթղթեր, ինչպես նաև իրականացնել իր առաջարկության ընդունմանն ուղղված քարոզչություն:
- 21-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն լոբբիստն իրավունք ունի տվյալ իրավաստեղծ մարմնի աշխատակարգը կանոնակարգող իրավական ակտով (ակտերով) սահմանված կարգով մուտք գործել իրավաստեղծ մարմնի նստավայր, իրավաստեղծ մարմնին կամ իրավաստեղծ լիազորությամբ անձին ներկայացնել լոբբիստական գործունեության առարկային վերաբերող առաջարկություններ, տեղեկատվական, վերլուծական և այլ փաստաթղթեր և ներկա գտնվել իրավաստեղծ մարմնի կոլեգիալ աշխատանքներին:
- Հոդված 22-ի 4-րդ մասով, որի համաձայն լոբբիստի գրավոր առաջարկությունը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան իրավաստեղծ մարմնում լոբբիստական գործունեության առարկայի քննարկումից երկու աշխատանքային օր առաջ, իրավաստեղծ լիազորությամբ անձը պարտավոր է ընդունել լոբբիստին և քննարկել նրա առաջարկությունը, կամ նրա հետ այդպիսի քննարկում կազմակերպել իր լիազորած անձի մասնակցությամբ, կամ ստացված առաջարկության վերաբերյալ իր դիրքորոշման մասին գրավոր հայտնել լոբբիստին:

Հասարակական կազմակերպությունների համար տվյալ օրինագծով սահմանված «օգուտների» և «վնասների» վերլուծության դեպքում ակնհայտ է դառնում, որ նշված «արտոնությունը» չի կարող հակակշիռ ծառայել ստեղծված արգելակների նկատմամբ:

Իսկ այն հանգամանքը, որ օրենքը՝ նախաբանի 2-րդ պարբերության համաձայն, դիտարկվում է որպես այլընտրանքային հնարավորություն ՀՀ-ների լոբբիստական գործունեության համար, տալիս է լուրջ հիմքեր պետական կառույցներին շահարկելու համապատասխան դրույթները և խոչընդոտելու ՀՀ-ների գործունեության ազատությունը մուտքը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման



մարմիններ: Նման շահարկումից խուսափելու համար անհրաժեշտ է օրենքով և ոչ թե առաջարկվող ուղեցույցով հստակ ձևակերպել պետական կառույցների պարտականությունները:

Այդ առումով առաջարկվում է երկու մոտեցում՝

- հստակ առավելություններ սահմանել հասարակական կազմակերպությունների համար, բացառելով դրանց հավասարեցումը լոբբիստական ձեռնարկատիրական գործունեությանը: Միայն այս պայմաններում հասարակական կազմակերպությունները կարող են հակված լինել օգտվելու օրենքով և իրավական այլ ակտերով իրեն վերապահված այլընտրանքային իրավունքներից և արտոնություններից, ինչպես նշված է օրինագծի նախաբանում:
- օրինագծի գործողության ոլորտում ընդգրկել միայն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց/կազմակերպություններին և օրենքի գործունեության շրջանակներից հանել հասարակական կազմակերպություններին: Առավել ևս, որ լոբբիստին տրվող արտոնություններից օգտվելու նպատակով հասարակական կազմակերպությունը կարող է ընտրել առավել ճկուն ուղի քան ընձեռում է նախորդ տարբերակը: Այսպես ՀԿ անդամներից մեկը կարող է հաշվառվել որպես լոբբիստ և իրականացնել համապատասխան գործունեություն ինչպես ՀԿ նպատակների իրագործման ուղղությամբ, այնպես էլ որպես անկախ փորձագետ, կամ ՀԿ-ն կարող է վարձել անհատ լոբբիստ կամ լոբբիստական կազմակերպություն շահերի պաշտպանության գործընթացի լոբբիզմին վերաբերող բաղադրիչն իրականացնելու նպատակով:

Սակայն, այն դեպքում, երբ հասարակական քննարկումների արդյունքում ի վերջո կընդունվի վերոհիշյալ առաջին մոտեցումը, Տարածաշրջանային զարգացման կենտրոնն առաջարկում է հետևյալը՝ ըստ հոդվածների.

Հոդված 4. Լոբբիստի գործունեությունը և դրա իրականացման հիմքերը

3. Հասարակական կազմակերպության անունից իրականացվող լոբբիստական գործունեությունը ... *չի կարող իրականացվել որպես վճարովի ծառայություն* արտահայտությունը կարելի է հասկանալ որ կազմակերպության լոբբիստը չպետք է վճարվի իր աշխատանքի համար:

Առաջարկվում է հանել տվյալ դրույթի նշված մասը, քանի որ *Պատվիրատու* սահմանումն արդեն իսկ ունի համապատասխան սահմանափակում վճարովի ծառայության վերաբերյալ:

Հոդված 10-15. (Գլուխ 3) Լոբբիստական գործունեություն իրականացնող անձանց հաշվառումը

Առաջարկվում է օրինագծից հանել հասարակական կազմակերպությունների հաշվառումը, քանի որ վերջիններս օրենքի համաձայն արդեն իսկ գրանցվում են Արդարադատության նախարարությունում, որի համաձայն ծավալում են իրենց գործունեությունը, այդ թվում՝ լոբբիստականը:

Հոդված 18. Լոբբիստի հավատարմագրման կարգը

2. Քանի որ լոբբիստի *հավատարմագրումն ուժի մեջ լինելու ընթացքում իրավաստեղծ մարմնի նստավայրում, իր լոբբիստական գործունեության առարկայից բացի, այլ ուղղությամբ լոբբիստական գործունեություն լոբբիստը կարող է իրականացնել միայն սահմանված կարգով նոր հավատարմագրումից հետո*, ապա հասարակական կազմակերպությունը, որն իրականացնում է լոբբիստական գործունեություն աղբահանության գործընթացը կարգավորելու ուղղությամբ 20 տեղական ինքնակառավարման մարմինների հետ, լավագույն դեպքում պետք է ապահովի իր ներկայացուցչի հավատարմագրումը առնվազն 20 տեղական ինքնակառավարման մարմիններում՝ վճարելով 100 հազար դրամ պետական տուրք: Իսկ եթե այդպիսի կազմակերպությունում լոբբիստական գործունեություն են ծավալում 5 հոգի, դրան գումարվում են անհատների՝ որպես լոբբիստ հաշվառվելու ծախսերը:

Առաջարկվում է օրինագծից հանել հասարակական կազմակերպությունների հավատարմագրումը, քանի որ հաճախ վերջիններս իրենց նպատակների իրականացման համար կարիք կունենան մուտք գործել տարբեր պետական կառույցներ՝ ինչպես լոբբիստական գործունեություն իրականացնելու այնպես էլ շահերի պաշտպանության գործընթացում համախոհներ ձեռք բերելու նպատակով: Նաև առաջարկվում է օրենքում ամրագրել համապատասխան նորմ, որը չի արգելի հասարակական կազմակերպություններին մուտք գործել կառույցներ առանց համապատասխան հավատարմագրման:

Հոդված 22. Լոբբիստի առաջարկությունները



Կարելի է ասել, որ լրբբիստի առաջարկությունների դիտարկման, քննարկման կամ հաշվի առնման համար չեն սահմանված ավել իրավունքներ, քան սահմանված են ՀՀ քաղաքացիների համար: Այդ առումով անհասկանալի է թվում առհասարակ լրբբիզմի ինստիտուտի նպատակահարմարությունը:

Հոդված 25. Լրբբիստական գործունեության ֆինանսավորման աղբյուրների սահմանափակումները

1. Լրբբիստական գործունեության իրականացման համար դրամական միջոցների և այլ գույքի ձևավորման (գոյացման) ժամանակ արգելվում են նվիրատվությունները՝

դ) օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից և օտարերկրյա իրավաբանական անձանցից, միջազգային կազմակերպություններից և միջազգային հասարակական շարժումներից, ինչպես նաև վերջին մեկ տարվա ընթացքում նրանցից նվիրատվություն (դրամաշնորհ) ստացած անձանցից:

Տվյալ դրույթը կարելի է գնահատել որպես ուղղակի հարված Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացին, հաշվի առնելով հետևյալը՝

ա/ Հայաստանում դեռևս չեն ձևավորվել համապատասխան տնտեսական և իրավական հիմքեր ներքին դոնոր կազմակերպությունների համար, իսկ գոյություն ունեցող սակավաթիվ դրամաշնորհները բաշխվում են բարձրաստիճան պետական հովանավորություն ունեցող կազմակերպություններին:

բ/ իրապես գործուն և ակտիվ հասարակական կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը այսօր ֆինանսավորում է ստանում օտարերկրյա աղբյուրներից և լրբբիստական գործունեության համար նման ֆինանսավորման սահմանափակումը փաստորեն արգելում է այսպիսի հասարակական կազմակերպությունների լրբբիստական գործունեությունը:

Ինչ վերաբերում է տվյալ դրույթի այնպիսի փոփոխության տարբերակին, որը կներառի Հայաստանում գրանցված դոնոր կազմակերպություններին նույնպես խիստ սահմանափակ է, քանի որ կարող են լինել այնպիսի դեպքեր, երբ.

- ՀԿ-ն ֆինանսավորում է ստանում ՄԱԿ-ի Հայաստանում գրասենյակ չունեցող (օրինակ՝ UNEP կամ UNCTAD) կառույցների կողմից իրականացնելու գործունեություն, որի մաս կարող է հանդիսանալ նաև լրբբիզմը:
- Պրոֆեսիոնալ որևէ ՀԿ (օրինակ՝ ճարտարապետների միությունը) իր սփյուռքահայ գործընկերների աջակցությամբ իրականացնում է ծրագիր, որի շրջանակներում բացահայտվում են օրենսդրության որոշ թերություններ (օրինակ՝ հեղինակային իրավունքի պաշտպանության ոլորտում) և կարիք է լինում փոփոխություն մտցնել ՀՀ օրենսդրության մեջ:

Հոդված 30. Լրբբիստների էթիկայի հանձնաժողովը

Օրինագծում բացարձակապես հիմնավորված չի լրբբիստների էթիկայի հանձնաժողովի նպատակահարմարությունը: Իսկ դրա իրավասությունները տալ եզրակացություն լրբբիստին հաշվառումից հանելու, լրբբիստի հավատարմագրման կասեցումը կամ դադարեցումը հիմնավորված լինելու մասին և միջնորդություն ներկայացնել լիազորված մարմին՝ ի պաշտպանություն լրբբիստների իրավունքների, կարող են հիմք տալ չարաշահումների համար:

ք. Երևան

11 նոյեմբերի, 2005թ.